



United Nations



unesco

Ջուր բոլոր մարդկանց համար

Հավասար իրավունքներ և հնարավորություններ

ՄԱԿ-ի Ջրային ոլորտի զարգացման համաշխարհային զեկույց, 2026թ.

Փաստեր և թվեր

Քաղցրահամ ջրի հասանելիությունը խաթարվում է աճող փոփոխականության, ջրի որակի վատթարացման և ոչ կայուն օգտագործման հետևանքով:

Համաշխարհային մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները գտնվում են աճող ճնշման ներքո՝ պայմանավորված բնական փոփոխականությամբ և մարդածին ազդեցություններով:

Վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսների ընդհանուր ծավալը կազմում է մոտավորապես 43,000 կմ³/տարի և գլոբալ մակարդակում ընդհանուր առմամբ մնում է հարաբերականորեն կայուն (FAO, n.d.a):

Համաշխարհային ջրառի ընդհանուր ծավալը 2010–2021 թվականներին միջինում կազմել է շուրջ 4,000 կմ³/տարի, ինչը համարժեք է վերականգնվող քաղցրահամ ջրային ռեսուրսների մոտ 10%-ին (FAO, n.d.a):

Կլիմայի փոփոխության հետևանքով ջրի հասանելիության սեզոնային և միջտարածաշրջանային փոփոխականությունն աճում է (IPCC, 2022):

Աշխարհի բնակչության առնվազն 50%-ը (կամ մոտավորապես 4 մլրդ մարդ) տարեկան առնվազն մեկ ամիս բախվում է ջրային բարձր սթրեսի (Kuzma et al., 2023):

Կլիմայի փոփոխության ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա առավել սուր են դրսևորվում տեղական մակարդակում, որտեղ ջրի կուտակման և բաշխման ենթակառուցվածքները անբավարար են (UNESCO/UN-Water, 2020):

Ջրի որակի վատթարացումը նվազեցնում է քաղցրահամ ջրի իրական հասանելիությունը և ամբողջ աշխարհում մեծացնում է ջրի մաքրման ու մատակարարման ծախսերը:

Ամբողջ աշխարհում դիտարկվող ջրային օբյեկտների միայն 56%-ն ունի շրջակա ջրի լավ որակ (Sustainable Development Goal (SDG) Indicator 6.3.2; UN-Water, n.d.):

Ամբողջ աշխարհում, այդ թվում՝ բարձր եկամուտ ունեցող երկրներում, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերը հանդիսանում են քաղցրահամ ջրի աղտոտման ամենամեծ աղբյուրը (United Nations, 2023; 2024):

Ցածր եկամուտ ունեցող երկրներում ջրի վատ որակը մեծապես կապված է կեղտաջրերի անբավարար մաքրման կամ մաքրման ենթակառուցվածքների բացակայության հետ (United Nations, 2023):

Ընդհանուր առմամբ, ջրառը կայունացել է, սակայն ոլորտային և տարածաշրջանային ջրապահանջարկի օրինաչափությունները կտրուկ տարբերվում են՝ կախված եկամտի մակարդակներից և զարգացման ուղիներից:

Գյուղատնտեսությունը կազմում է ընդհանուր ջրառի 72%-ը, որին հաջորդում են արդյունաբերությունը (15%) և կոմունալ կարիքների համար ջրառը (13%) (United Nations, 2025):

Գյուղատնտեսությունը, ցածր եկամուտ ունեցող երկրներում, կազմում է ընդհանուր ջրօգտագործման մոտ 90%-ը, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 44%-ը, ինչն արտացոլում է տնտեսական դիվերսիֆիկացիան (United Nations, 2025):

Քաղաքաշինությունը ցածր և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում հանգեցնում է քաղաքային ջրի պահանջարկի աճին և գյուղատնտեսության հետ մրցակցության՝ հատկապես քաղաքամերձ տարածքներում (United Nations, 2023; 2024):

Վերջին երկու տասնամյակների ընթացքում միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներում արդյունաբերական ջրապահանջարկը նվազել է, ինչը վկայում է արդյունավետության աճի մասին (United Nations, 2025):

ԿԶՆ 6-ի ոչ մի թիրախ 2030 թվականին հասնելու ուղու վրա չէ

2024 թվականի դրությամբ աշխարհի բնակչության 26%-ը չունի անվտանգ և պատշաճ կառավարվող խմելու ջրի ծառայությունների հնարավորություն, իսկ 41%-ը՝ անվտանգ և պատշաճ կառավարվող սանիտարական ծառայությունների (SDG Indicators 6.1.1 and 6.2.1a; UN-Water, n.d.):

Ամբողջ աշխարհում կենցաղային կեղտաջրերի միայն 56%-ն է ենթարկվում անվտանգ մաքրման (SDG Indicator 6.3.1; UN-Water, n.d.):

Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ներդրման մակարդակը կազմում է 57%, և անդրսահմանային ջրավազանային տարածքների միայն 59%-ում են առկա գործառնական համագործակցության պայմանավորվածություններ (SDG Indicators 6.5.1 and 6.5.2; UN-Water, n.d.):

Խմելու ջրի, սանիտարական և հիգիենիկ ծառայությունների (WASH) հասանելիությունը չի համապատասխանում աճող մարդաժին ճնշմանը, ինչը անհամաչափ ծանր բեռ է դնում կանանց և աղջիկների վրա:

Ընդհանուր առմամբ, անվտանգ և պատշաճ կառավարվող ջրի ու սանիտարական ծառայությունների հասանելիությունը բարելավվել է, սակայն դեռևս կան զգալի բացեր:

2015-2024թթ. 961 մլն մարդ ձեռք բերեց անվտանգ և պատշաճ կառավարվող խմելու ջրի հասանելիություն, ինչը գլոբալ ծածկույթը բարձրացրեց 68%-ից մինչև 74%-ի: Նույն ժամանակահատվածում 1.2 մլրդ մարդ ձեռք բերեց նաև անվտանգ և պատշաճ կառավարվող սանիտարական ծառայություններ՝ բարձրացնելով գլոբալ ծածկույթը 48%-ից 58%-ի: Չնայած այս առաջընթացի, 2024 թվականի դրությամբ 2.1 մլրդ մարդ դեռևս չունի անվտանգ կառավարվող խմելու ջուր, 3.4 մլրդ՝ անվտանգ կառավարվող սանիտարական պայմաններ, իսկ 1.7 մլրդ՝ տանը տարրական հիգիենիկ ծառայություններ (WHO/UNICEF, 2025a):

Տնային տարածքից դուրս ջրի հասանելիության խնդիրը շարունակում է լայն տարածում ունենալ, և դրա հիմնական բեռը կրում են կանայք և աղջիկները:

Մոտավոր գնահատմամբ, 1.8 մլրդ մարդ ապրում է տնային տնտեսություններում, որտեղ ջրամատակարարումը հասանելի չէ բնակարանի տարածքում, որոնցից շուրջ 700 մլն-ը ջուր է բերում բարելավված կամ չբարելավված աղբյուրներից: Նման տնային տնտեսություններում ջրի հավաքման պատասխանատվությունը տասը դեպքից յոթում կրում են կանայք և աղջիկները (UNICEF/WHO, 2023):

Ջրի հավաքման գենդերային բեռը ձևավորվում է վաղ տարիքից և պահպանվում է ողջ կյանքի ընթացքում:

15 տարեկանից ցածր աղջիկներն ավելի հաճախ են զբաղվում ջուր բերելով, քան տղաները (7%, 4%-ի դիմաց): 2016 թվականին 5-9 տարեկան աղջիկները տնային գործերի վրա ծախսել են 30%-ով ավելի շատ ժամանակ, քան տղաները, ինչը համարժեք է համաշխարհային մակարդակով օրական լրացուցիչ 40 մլն ժամի (UNICEF, 2016): Ընդհանուր առմամբ, կանայք և աղջիկները ջուր հավաքելու վրա օրական ծախսում են մոտ 250 մլն ժամ, ինչը նվազեցնում է կրթության, հանգստի և տնտեսական գործունեության համար հասանելի ժամանակը (UN Women, 2024a):

Տնային տնտեսություններում ջրամատակարարման կառավարումը մեծապես կախված է կանանց չվճարվող աշխատանքից:

Կանայք անհամաչափորեն կատարում են անվճար կամ պակաս գնահատված աշխատանք, ինչի արդյունքում ավելանում է նրանց՝ չվճարվող աշխատանքի բեռը (Cherukumilli et al., 2023):

Բնակարանային անապահովությունն ու մատչելիության խնդիրները ձևավորում են ջրի անհավասար հասանելիությունը:

Տնային տնտեսությունները ղեկավարող կանայք հաճախ բախվում են խտրական պրակտիկայի, բնակարանային սեփականության անապահովության և սուղ ֆինանսական ռեսուրսների, ինչը սահմանափակում է բնակարանների և հիմնական ծառայությունների հասանելիությունը (Chant and McIlwaine, 2015; SWA, 2021): Արտակարգ իրավիճակներում և ոչ ֆորմալ բնակավայրերում ապրող մարդիկ մշտապես ավելի բարձր գին են վճարում ջրի համար, քան պաշտոնական բնակավայրերում ապրողները (Hutton, 2012; Meehan et al., 2025):

Դպրոցներում WASH ծառայությունների բացերն ազդում են կրթության և առողջապահության արդյունքների վրա:

Համաշխարհային մասշտաբով դպրոցների 23%-ը զուրկ է խմելու ջրի հիմնական ծառայություններից, 22%-ը՝ սանիտարական պայմաններից, իսկ 33%-ը՝ հիգիենայի հիմնական ծառայություններից: Մինչև 2030 թվականը համընդհանուր հասանելիության հասնելու համար անհրաժեշտ է ջրամատակարարման և սանիտարական ծածկույթի կրկնակի և հիգիենայի ծառայությունների մատուցման՝ քառակի ավելացում (UNICEF/WHO, 2024): 2016-2022 թվականների ընթացքում 41 երկրներում ավելի քան 10 մլն դեռահաս աղջիկներ (15-19 տարեկան) հայտնել են, որ դաշտանի ժամանակ բաց են թողել դպրոց այցելությունները կամ այլ գործունեություն: Հինգ դպրոցներից միայն երկուսն են ապահովել դաշտանային առողջության վերաբերյալ կրթությունը (UNICEF/WHO, 2024; UNICEF/UN Women/Plan International, 2025):

Անբավարար WASH ծառայություններն ազդում են առողջապահության որակի և աշխատողների վրա:

2018 թվականին ծնունդների 76%-ը տեղի էր ունենում առողջապահական հաստատություններում, սակայն անբավարար հիգիենիկ պայմանները շարունակել են ազդել բուժման որակի և ծառայությունների կիրառման վրա (Bouزيد et al., 2018): 2020 թվականին WASH ծառայությունները դասվել են 1.2 մլն կանանց շրջանում մոր և վերարտադրողական առողջության ծառայությունների պահանջարկի առաջին հինգ առաջատարների շարքում (WHO/UNICEF, 2020): Չնայած կանայք կազմում են առողջապահության ոլորտի ընդհանուր աշխատուժի 70%-ը, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում (LMIC) առողջապահական հաստատությունների միայն 78%-ն ունի ջրամատակարարման հիմնական ծառայություններ (ILO, 2017; UNICEF/WHO, 2024):

Ջրի անապահովությունն ազդում է ֆիզիկական և հոգեկան առողջության վրա:

Ջրի անապահովությունը կապված է ֆիզիկական և հոգեկան առողջության անբարենպաստ հետևանքների հետ, մասնավորապես՝ գյուղական վայրերում, որտեղ կանայք և աղջիկները ջրի հիմնական հավաքողներն են (UN Women, 2014; Jayaweera et al., 2022; United Nations, 2023): 2020թ-ին 21 ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում տնային տնտեսությունների 13%-ը հայտնել է ջուր բերելու ընթացքում փաստվածքի դեպք, որոնցից կանայք ավելի հաճախ են ենթարկվել դրա ազդեցությանը (Venkataramanan and partners, 2020): Հղիության ընթացքում ջրի հավաքումը կապվել է նախածննդային խնամքի կիրառման նվազման հետ (Geere and partners, 2018):

Բնակարանից դուրս ջրի և հիգիենայի ծառայությունների հասանելիությունը կապված է անվտանգության ռիսկերի ավելացման հետ:

Վկայությունները ցույց են տվել, որ ջրային և հիգիենայի ծառայություններին հասնելիս առկա են սեռական բռնության, ոսնձգությունների և բռնաբարության ռիսկերի ավելացում, հատկապես վատ լուսավորված կամ հեռավոր տարածքներում (Sorenson and partners, 2011; Caruso and partners, 2017; Gibbs and partners, 2020): Այս ռիսկերը հաճախ քողարկվել են՝ լուռության և վրեժի վախի պատճառով (Sommer and partners, 2015; WHO, 2024): Ջրի ծառայությունների դիմաց բռնության դեպքերը փաստացի կապվել են գենդերային անհավասար չափանիշների, ենթակառուցվածքների և բարձր ջրի սակագնի հետ (MacArthur et al., 2020; Merkle et al., 2023; WIN, 2024):

Տեղահանությունը սրում է WASH ռիսկերը, և ի հայտ եկող ինստիտուցիոնալ շրջանակները ձգտում են ավելի համակարգված կառավարել այդ ռիսկերը:

Փախստականներն ու ներքին տեղահանվածները բախվում են WASH-ի հետ կապված լուրջ և անբավարար փաստաթղթավորված խնդիրների, ներառյալ՝ ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների ազդեցությունը ծառայության ընդհատումների պատճառով (MSF, 2023):

Արտադրական նպատակներով ջրադբյուրների անհավասար հասանելիությունը սահմանափակում է կանանց ապրուստը և տնային տնտեսությունների պարենային անվտանգությունը

Կանայք կարևոր դեր են խաղում ագրոպարենային համակարգում, բայց անընդհատ բախվում են աշխատավարձերի և լիազորությունների պակասի հետ:

2019թ-ի դրությամբ ագրոպարենային համակարգերում աշխատում էին աշխատող կանանց 36%-ը և ամբողջ աշխարհում աշխատող տղամարդկանց 38%-ը: Չնայած կանանց կենտրոնական դերին, 2023թ-ին գյուղատնտեսության ոլորտում կանանց աշխատավարձերը 18.4%-ով պակաս էին, քան տղամարդկանցը (FAO, 2023):

Շատ երկրներում հողի և ջրի նկատմամբ կանանց իրավունքները դեռ թույլ են պաշտպանված:

2018թ-ին կանայք կազմել են գյուղատնտեսական հողերի սեփականատերերի 15%-ից ավելի քիչ (FAO, 2018): 2009-2023 թթ-ին 49 հաշվետու երկրներից 43-ում գյուղատնտեսական հողերի սեփականատերերի թիվը տղամարդկանցից պակաս էր, ընդ որում՝ այդ երկրների գրեթե կեսում տղամարդիկ տիրապետում էին առնվազն կրկնակի մեծ սեփականության բաժնեմասի (FAO, 2025a):

Ջրի և ծառայությունների անհավասար հասանելիությունը հանգեցնում է կատարողականի զգալի բացերի:

2023թ-ին կանանց և տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների միջև կատարողականի բացը գնահատվել է 24%՝ հիմնականում ջրի, տեխնոլոգիայի, վարկերի և տարածման ծառայությունների անհավասար հասանելիության պատճառով (FAO, 2023): Առկա ապացույցները վկայում են, որ կանայք կառավարում են ոռոգելի հողերի ավելի փոքր մասնաբաժին և ավելի փոքր տնամերձ տարածքներ, քան տղամարդիկ (FAO, n.d.b):

Կանայք դեռևս թերերկայացված են գյուղատնտեսական ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում:

2023թ-ի դրությամբ 191 երկրների միայն 27%-ն է հայտնել ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում կանանց ներկայացվածության բարձր մակարդակի կամ նրանց հետ կանոնավոր խորհրդակցությունների մասին (UNEP-DHI/GWP/UN Women, 2025)՝ ներառյալ ջրօգտագործողների ասոցիացիաները (AWP), գետավազանային կազմակերպությունները և ոռոգման հանձնաժողովները:

Կանանց ուղղված ոռոգման ծրագրերը մեծ եկամտա-բերություն են բերել:

Նպատակային աջակցություն ստացող կանանց համար ոռոգման ջրի բարելավված հասանելիությունը բերել է բերքատվության մինչև 60%-ով աճի և ամրապնդել է տնտեսական անկախությունը (World Bank, 2024):

Կանայք լայնորեն ներկայացված են համաշխարհային աշխատուժում, բայց դեռևս քիչ ներկայացված են ջրամատակարարման ոլորտներում:

Կանայք կազմում են համաշխարհային աշխատուժի 40%-ը, որոնցից 24%-ը աշխատում է արդյունաբերության ոլորտում (World Bank, n.d.): Թեև դրանով հանդերձ, կանանց մասնակցությունը ջրային ծառայություններով զբաղվող արդյունաբերական ոլորտներում սահմանափակ է. 2018–2019 թվականներին կանայք կազմում էին ամբողջ աշխարհի ջրամատակարարման համակարգերի աշխատակիցների միայն 17.7%-ը (World Bank, 2019):

Ջրի խնդիրներ առկա են բոլոր տարածաշրջաններում, որոնք պահանջում են համատեքստային և գենդերազգային միջոցառումներ:

Ջուրն ընկած է Աֆրիկայի տնտեսության հիմքում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում՝ որպես գերիշխող ջրօգտագործող: Այնուամենայնիվ, ջրի համատարած դեֆիցիտը և WASH-ի սահմանափակ հասանելիությունը դեռ զգացվում են:

2021 թվականին Աֆրիկայի քաղցրահամ ջրի պաշարների 79%-ը օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով, մի ոլորտ, որտեղ աշխատում է աշխատուժի ավելի քան 45%-ը և մեծապես կախված է տեղումներից և ստորերկրյա ջրերից (FAO, 2025b; n.d.c):

2024 թվականին ջրամատակարարման և սանիտարական հիմնական ծառայությունների հասանելիության գնահատված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 58% և 47% (WHO/UNICEF, 2024): Վատ սանիտարական, հիգիենիկ պայմանները և աղտոտված ջուրը կապված են Աֆրիկայում մոտավորապես ժամում 115 մահվան դեպքերի հետ (WHO, n.d.):

Ջրի անբավարար հասանելիությունը մեծ ժամանակային բեռ է ստեղծում կանանց համար, հատկապես գյուղական վայրերում, ինչը կարող է կանանց համար խնայել տարեկան 77 մլն աշխատանքային օր (WaterAid, 2023): Այս բեռը հատկապես սուր է գյուղական վայրերում, որտեղ 2019 թվականին, ըստ հաղորդումների, տնային տնտեսությունների 80%-ը կախված է եղել հեռու գնտվող ջրային աղբյուրներից (UNICEF/WHO, 2019):

Ջրային ռեսուրսների գենդերային հավասար կառավարման քաղաքական պարտավորությունները գերազանցում են դրանց իրականացման տեմպերը:

Աֆրիկայի ջրային տեսլական 2025թ-ին գենդերային հավասարությունը ընդունել է որպես ջրային անվտանգության կարևոր գործոն (African Union/ECA/AfDB, 2000): Սակայն, առաջընթացը մնում է սահմանափակ. 2022թ-ին ազգային ջրային քաղաքականություններում 30%-ից պակաս աֆրիկյան երկրներն են ներառել գենդերային նպատակներ (AMCOW/African Union, 2022): Իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների բացթողումները, այդ թվում՝ ազգային օրենքներում գենդերային հատուկ դրույթների բացակայությունը, խոչընդոտում են առաջընթացին (RRI/ELI, 2020):

Կլիմայի փոփոխականությունը և էկոհամակարգի դեգրադացիան ուժեղացնում են ջրային անապահովությունը՝ գենդերային ազդեցություններով կապված:

Սահարայի ենթասահարյան Աֆրիկայում անկանոն տեղումներն ու երկարատև երաշտները հաճախակիացել են՝ այդպիսով սրելով ջրի սակավությունը: Խոնավ տարածքների և անտառների քայքայումը կարող է խթանել մարդկանց տնային տնտեսություններում ջրի ու պարենի ապահովվածությունը, ինչն անհամաչափորեն ազդում կանանց վրա (UN Women, 2023): Կառավարման խնդիրները և ռեսուրսների սահմանափակումը, հատկապես թույլ պետություններում, լրացուցիչ խոչընդոտ են հանդիսանում կլիմայի հարմարվողականության և ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության հասնելու գործում:

Թվային տեխնոլոգիաների և հմտությունների պակասը սահմանափակում է Աֆրիկայում կանանց մասնակցությունը ջրամատակարարման և կլիմայի փոփոխության մարտահրավերներին:

Թվային տեխնոլոգիաների ներառումը շարունակում է մնալ գլխավոր գենդերային մարտահրավեր Աֆրիկայում. յուրաքանչյուր 100 տղամարդու համար, ովքեր ունեն էլեկտրոնային աղյուսակների հետ աշխատելու հմտություններ, միայն 40–44 կին է ցույց տալիս համարժեք կարողություն, և ենթասահարյան Աֆրիկայում գիտության, տեխնոլոգիայի, ինժեներիայի և մաթեմատիկայի (STEM) ոլորտի շրջանավարտների երեքից պակասն են կանայք (UNESCO, 2024):

Ֆինանսավորման պակասը սահմանափակում է WASH-ի և գենդերազգային ջրային արդյունքների առաջընթացը:

Սահարայի ենթասահարյան Աֆրիկայում WASH-ի հետ կապված նպատակներին հասնելու համար տարեկան պահանջվում է մոտավորապես 64 մլրդ ԱՄՆ դոլար, սակայն տարեկան փաստացի ներդրումները կազմում են 10-ից 19 մլրդ ԱՄՆ դոլար (African Union, 2023): Զրի սակագները մնում են ծախսերի փոխհատուցման մակարդակից ցածր, ընդ որում աֆրիկյան երկրների կեսից պակասը սակագներով ծածկում է WASH-ի շահագործման և պահպանման ծախսերի ավելի քան 80%-ը: Այս ոլորտը ներգրավում է սահմանափակ մասնավոր ֆինանսավորում, որը կազմում է Աֆրիկայում մասնավոր ներդրումների ընդամենը 2%-ը 2012-2020 թվականներին (Farnoult and Sarr, 2024):

Ասիան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը ներառում են աշխարհի՝ կլիմայական առումով ամենախոցելի տարածքներից մի քանիսը, որտեղ կանայք անհամաչափորեն տուժում են ջրի հետ կապված բնական աղետներից:

Մյանմարում Նարգիս ցիկլոնի ժամանակ կանանց մահացությունը կազմել է մահացությունների 61%-ը (2008թ.), Հնդկաստանի և Ինդոնեզիայի որոշ հատվածներում 2004թ-ին Հնդկական օվկիանոսի ցունամիի ժամանակ՝ 70-80%, իսկ Բանգլադեշում 1991 թվականի ցիկլոնի ժամանակ՝ 91% (UNDP, 2013):

Ասիայի մեծ մասում կանանց համար անվտանգ ջրին հասանելիությունը բարելավվել է, սակայն Խաղաղօվկիանոսյան փոքր կղզիների զարգացող երկրներում այս առաջընթացը չի նկատվել:

Կենտրոնական Ասիայում կանանց և աղջիկների թիվը, ովքեր չունեն բարելավված մակերևութային ջրաղբյուրների հասանելիություն, 2000 թ-ի 107 մլն-ից նվազել է մինչև 61 մլն 2015 թ-ին և 31 մլն՝ 2022 թ-ին: Արևելյան և հարավարևելյան Ասիայում նրանց թիվը 2000 թ-ի 188 մլն-ից նվազել է մինչև 73 մլն՝ 2015 թ-ին, և 30 մլն՝ 2022 թ-ին: Ի հակադրություն, խաղաղօվկիանոսյան փոքր կղզիների զարգացող երկրներում նրանց թիվը 2000-2015 թթ-ին մնացել է 2 մլն-ի մակարդակի վրա և 2022 թ-ին աճել է մինչև 3 մլն (UN Women/DESA, 2023):

Կենտրոնական, Հարավային և հարավ-արևմտյան Ասիայում բնակչության 24%-ը օգտագործում է բացօթյա ջրի հավաքման համակարգ, իսկ կանանց և դեռահաս աղջիկներին բաժին է ընկնում ջրի հավաքման ժամանակի ավելի քան 2/3-ը: Տարածաշրջանի մի քանի երկրներում կանայք և աղջիկները երկար տարածություններ են անցնում և ավելի շատ ժամանակ են ծախսում ջուր հավաքելու վրա, քան տղամարդիկ (ESCAP/UN Women, 2024):

Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրների դպրոցներում համարժեք WASH ծառայությունների հասանելիությունը շարունակում է մնալ զարգացման կարևորագույն մարտահրավերը:

Դպրոցներում անբավարար WASH ծառայությունները խաթարում են Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի միլիոնավոր երեխաների առողջությունը, արժանապատվությունը և ուսումնական արդյունքները. 4-ից մեկ դպրոց գուրկ է տարրական խմելու ջրից, իսկ 5-ից գրեթե երկուսը՝ ձեռքերը լվանալու հարմարություններից, ինչն ազդում է տարածաշրջանում մինչև 59 մլն աշակերտի վրա (UNICEF, 2025):

Եվրոպան ունի գրեթե համընդհանուր ջրի հասանելիություն, սակայն ջրային ոլորտում գենդերային անհավասարությունները պահպանվում են:

Չնայած Եվրոպայում ջրամատակարարման և սանիտարական պայմանների գրեթե համընդհանուր հասանելիությանը, գենդերային տարբերությունները դեռևս դրսևորվում են ջրային ոլորտում կառավարման, գիտելիքների համակարգերի, ֆինանսավորման և մասնակցության մեջ (Crider and Ray, 2022; UNICEF/WHO, 2023):

Արևելյան և Հարավային Եվրոպան բախվել է երաշտի հաճախակի ցիկլերի, որոնք ազդել են փոքր գյուղատնտեսության վրա: Միջերկրածովյան տարածաշրջանում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տղամարդկանց կողմից ղեկավարվող առևտրային տնտեսություններն անհամաչափորեն օգտվում են ջրախնայող ոռոգման ծրագրերից, մինչդեռ կանայք չեն ստանում խորհրդատվություն և ֆինանսավորման մեխանիզմներ (Minoya, 2007):

Արաբական տարածաշրջանը բախվում է ջրի սուր պակասի և WASH ծառայությունների շարունակական բացերի հետ, որոնք խաթարում են կրթությունն ու առօրյա կյանքը, սակայն կանանց ներդրավածությունը ջրային ռեսուրսների կառավարմանը և մասնակցային կառավարմանը մնում է ցածր:

Արաբական տարածաշրջանն ամենամեծ ջրասակավ տարածաշրջաններից մեկն է. 22 արաբական պետություններից 19-ը համապատասխանում են ջրի դեֆիցիտի պաշտոնական սահմանումներին, իսկ 13-ը՝ ջրի բացարձակ դեֆիցիտի սահմանումներին (ESCWA, 2024):

Ենթադրվում է, որ արաբական տարածաշրջանի դպրոցների 15%-ը ջրի սահմանափակ հասանելիություն ունի կամ ընդհանրապես հասանելիություն չունի, մինչդեռ դպրոցների 18%-ը չունի հիմնական սանիտարական ծառայություններ (ԱՀԿ/ՅՈՒՆԻՍԵֆ, ն.դ.), ինչը հետևանքներ ունի առողջության, կրթության և մասնակցության համար:

2020-2024թթ-ի ընթացքում կանայք արաբական երկրներում ավելի ցածր միավորներով են ավարտել STEM ոլորտները (ջրային ռեսուրսների կառավարման և WASH-ի ամենաարդիական կուրսերը), քան տղամարդիկ (UIS, n.d.): 2021թ-ի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կրթական այս բացերն արտացոլված են ջրային ոլորտի աշխատավայրերում ներկայացվածության մեջ (Afailal et al., 2021):

Արաբական տարածաշրջանի 19 երկրներին վերաբերող մեկ զեկույցում պարզվել է, որ ՋՌՀ-ում գենդերային հավասարության ներառումը սահմանափակ է, և երկրներից քչերն են հաշվետվողականության մեխանիզմների միջոցով համակարգված կերպով վերանայում կամ վերափոխում գենդերային հարցերին վերաբերող գործունեությունն ու արդյունքները (ESCWA/UNEP-DHI, 2025):

Սեռով տարանջատված տվյալների մշտական բացթողումները և համապատասխան կրթության ու վերապատրաստումների անհավասար հասանելիությունը շարունակում են խոչընդոտել ապացույցների վրա հիմնված, գենդերազգայուն ջրային քաղաքականությանը:

Սեռով տարանջատված ջրի վերաբերյալ տվյալները մնում են սակավաթիվ և մասնատված:

Ջրի հասանելիության և ջրին առնչվող աշխատանքների վերաբերյալ տվյալները սահմանափակ են, և երբ դրանք հասանելի են, հաճախ հավաքագրվում են տնային տնտեսությունների մակարդակով՝ քողարկելով գենդերային տարբերությունները (Miletto et al., 2019; Caruso, 2023): Բազմաթիվ երկրների կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալների՝ սեռի հիման վրա ապագրեզացումը բարելավում է WASH ծառայությունների հասցեականությունը և արդյունավետությունը (Nauges and Strand, 2017; Silva et al., 2020; Winter et al., 2021):

Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում տվյալների ամենամեծ բացերը վերաբերում են գյուղատնտեսության ոլորտում կանանց աշխատանքին և ոռոգման համակարգերի հասանելիությանը: 2016թ-ին կատարված ուսումնասիրությունը, որը բաժանում է մշակաբույսերի բերքատվությունը կանանց և տղամարդկանց հողատարածքների միջև, ցույց է տվել, որ բերքատվության պակասի տարբերությունը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում 20–30% է (FAO, 2016):

Ջրի տվյալների գենդերային առումով զգայուն միջազգային գործիքները գնալով ավելի հասանելի են դառնում:

ՄԱԿ-ի գործակալությունները մշակել և փորձարկել են սեռով տարանջատված ջրի տվյալների հավաքագրման բազմաթիվ գործիքներ: Դրանց թվում են Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության AQUASTAT-ը, Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի գենդերային զգայուն ցուցանիշների նվազագույն հավաքածուն, *Սեռով տարբերակված ջրի տվյալների UNESCO-ի WWAP գործիքակազմը* և ՄԱԿ-Ջուր կազմակերպության ԿՁՆ 6-ի գենդերային ցուցանիշների շրջանակը, որը փորձարկվել է Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում (Miletto et al., 2019; DESA, 2020; UN-Water, 2023; FAO, n.d.d):

Սեռով տարանջատված տվյալների հավաքագրումը, ուսուցումը և մասնագիտական զարգացման աջակցությունը պահանջում են նպատակային ռեսուրսներ:

Հիմնական կրթության ոլորտում նշանակալի առաջընթաց է գրանցվել՝ ստեղծելով ամուր հիմք կրթական մնացած բացերը նվազեցնելու համար, այդ թվում՝ STEM կրթության ոլորտում:

Թեև տարրական և միջնակարգ կրթության մեջ ընդգրկվածությունը համաշխարհային մակարդակով բարելավվել է, ցածր եկամուտ ունեցող տարածաշրջաններում աղջիկները դեռևս հետ են մնում տղաներից միջնակարգ դպրոցն ավարտելու հարցում. 2022 թվականին Հարավային Ասիայում այդ ցուցանիշը կազմել է 36%՝ ընդդեմ 41%-ի, իսկ Սահարայի ենթասահարյան Աֆրիկայում՝ 25%՝ ընդդեմ 31%-ի (Sosale et al., 2023; UNESCO GEM Report/UIS, 2024):

STEM ոլորտում ընդունվածների մասին տվյալներ ներկայացնող երկրների 87%-ի համար գենդերային տարբերություններն արդեն տեսանելի են միջնակարգ կրթության մակարդակում (Straza, 2024): Կանայք տղամարդկանցից ավելի քիչ հավանականություն ունեն ընդունվելու ճարտարագիտության, արտադրության և շինարարության ոլորտներում, ինչը բերում է նրանց ցածր ներկայացվածությանը ջրային ռեսուրսների կառավարման և կառավարման ոլորտներում (UNESCO WWAP, 2021; Straza, 2024):

Ինստիտուցիոնալացված տեխնիկական և մասնագիտական կրթությունն ու վերապատրաստումը, ինչպես նաև ջրային ռեսուրսների հետ կապված ոչ ֆորմալ վերապատրաստման ծրագրերը հնարավորություն են տալիս զարգացնել հմտությունները: Մեքսիկայում անցկացված մեկ ծրագրում 2024 թ-ին կանայք կազմել են մասնակիցների 40%-ը (9,675), ինչը վկայում է կառուցվածքային վերապատրաստմանը կանանց մասնակցության աճի մասին:¹

¹ Տեղեկացված է Asociación Nacional de Entidades de Agua y Saneamiento-ի Գլխավոր տնօրենի կողմից, 2025 թվականի հուլիս, անձնական հաղորդակցություն:

Չնայած ամենաշատը տուժելուն, կանայք դեռևս թերներկայացված են ջրային ռեսուրսների կառավարման և կարգավորման ոլորտներում, ինչը սահմանափակում է նրանց ազդեցությունը կարևոր որոշումների կայացման վրա:

Համաշխարհային ջրային ոլորտն ունի զգալի հնարավորություն՝ խթանելու ներառականությունն ու արդյունավետությունը, ընդլայնելով կանանց մասնակցությունը տեխնիկական և ղեկավար պաշտոններում:

28 ցածր-միջին և միջին տնտեսական շուկաների 64 կոմունալ ծառայությունների տվյալներով բացահայտվել է, որ կան զգալի հնարավորություններ ջրային աշխատուժում կանանց մասնակցության և առաջնորդության ընդլայնման համար (World Bank, 2019): Չնայած կանայք կազմում էին ջրային ոլորտի աշխատողների 5-ից մեկը, և 2019 թ-ի դրությամբ համաշխարհային մակարդակով պահպանվում էր մոտ 20% գենդերային աշխատավարձի տարբերություն (ILO, 2019), շատ կոմունալ ծառայություններ ընդունում են բազմազան թիմերի արժեքը: Հատկանշական է, որ կին ինժեներների և մենեջերների ներկայության ավելացումը, ովքեր բացակայում էին համապատասխանաբար կոմունալ ծառայությունների 1/3-ում և 12%-ում (World Bank, 2019), հստակ ուղի է բացում ոլորտում կատարողականը, նորարարությունը և գենդերային հավասարությունը բարելավելու համար:

Աշխարհում ավելի ու ավելի է գիտակցվում ջրային ռեսուրսների կառավարման մեջ գենդերային հավասարության ապահովման անհրաժեշտությունը՝ ավելի ներառական և արդյունավետ որոշումների կայացման համակարգեր կառուցելու համար:

Կայուն զարգացման նպատակների 6.5.1 թիրախի համաձայն՝ ՋՌՀԿ օրենքներում, քաղաքականություններում և ծրագրերում գենդերային հավասարության ինտեգրման համաշխարհային միջին միավորները 2020 թվականին 54%-ից աճել են մինչև 2023 թվականի 58%: Այնուամենայնիվ, երկրների միայն 27%-ն է հայտնել գենդերային նպատակներին հասնելու մասին, մինչդեռ 15%-ը չունեն գենդերային հավասարության ինտեգրման մեխանիզմներ, իսկ 31%-ը՝ սահմանափակ իրականացում, բյուջետավորում կամ մոնիթորինգ (UNEP-DHI/GWP/UN Women, 2025):

Ազգային ջրային քաղաքականությունների մեծ մասը հստակորեն նպատակ են դրել ներառել կանանց և աղջիկներին. նկատվում է աճող դինամիկա՝ այս հանձնառությունները ամրապնդելու ուղղությամբ, քանի որ երկրներն աստիճանաբար ընդլայնում են մոնիթորինգի մեխանիզմները և հատկացնում են ֆինանսավորում՝ ծառայությունների արդյունավետ մատուցումն ապահովելու համար (WHO, 2022):

2021–2022թթ-ին 109 երկրներից 79-ում կանայք գրադեցնում էին պետական աշխատատեղերում WASH ծառայությունների պաշտոնների կեսից պակասը և 10%-ից պակաս՝ երկրների գրեթե մեկ քառորդում (WHO, 2022): Զարգացող երկրներում 173 ջրային ոլորտի կազմակերպությունների շրջանում անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ կանայք կազմում են կրտսեր աշխատակազմի 36%-ը, միջին մակարդակի աշխատակազմի՝ 38%-ը, սակայն ղեկավար պաշտոններում՝ միայն 26%-ը (Olusanya et al., 2024):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոռոգման ջրօգտագործողների ասոցիացիաներում կանանց ցածր ղեկավարության մակարդակը կապված է անարդյունավետ կառավարման, թույլ արդարության և ցածր կայունության հետ (Imburgia et al., 2020):

Կայուն զարգացման նպատակների 6.5.2 թիրախի վերլուծությունը ցույց է տալիս, որ գետավազանների միայն 19%-ն է ներառում հավասարության և ներառման նպատակներ, և միայն 15%-ն է ներառում գենդերային հարցերին վերաբերող առաջադրանքներ համատեղ մարմիններում: Կանանց կազմակերպությունները դիտորդի կարգավիճակ ունեն գետավազանների 10%-ում և խորհրդատվական դերեր՝ 8%-ում, ինչը վկայում է ինստիտուցիոնալ սահմանափակ ներառման մասին (UNECE/UNESCO/UN-Water, 2024):

Գենդերային քվոտաները և առաջնորդությունը չափելի առաջընթաց են ապահովում կանանց ներկայացվածության և կառավարման արդյունքների առումով:

Կառավարման մեջ գենդերային քվոտաների կիրառումը կապված է արդարության և կայունության բարելավման հետ (ECOSOC, 2022; 2025): Բնապահպանության նախարարությունների ղեկավարների պաշտոններում կանանց մասնաբաժինը 2024 թվականի հունվարին աճել է՝ հասնելով 28%-ի, 2020 թվականի 15%-ի և 2015 թվականի 12%-ի համեմատ (IUCN, 2021; UN Women, 2024b):

Ջրային ոլորտում առավել արդյունավետ և գենդերազգայուն ներդրումների միջոցով մշտական թերֆինանսավորման խնդրի լուծումը կարևոր է գենդերային հավասարության առաջխաղացման համար:

Ջրային ռեսուրսների համաշխարհային ներդրումները մեծացնելու զգալի հնարավորություն կա՝ աճող կարիքները բավարարելու և սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտների լայն շրջանակ ստանալու համար:

2022թ-ին ջրային ենթակառուցվածքների և կառավարման ոլորտում համաշխարհային ներդրումները կազմել են տարեկան մոտ 300 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ մինչև 2030թ-ը ջրային անվտանգությանը հասնելու համար տարեկան գնահատվում է 700 մլրդ ԱՄՆ դոլար ֆինանսավորման բաց (OECD, 2022): Եթե ներդրումների տեմպերը չաճեն, ջրային ենթակառուցվածքների կուտակային ֆինանսավորման կարիքները, կանխատեսումների համաձայն, կհասնեն 6.7 տրիլիոն ԱՄՆ դոլարի՝ մինչև 2030 թ-ը, և 22.6 տրիլիոն ԱՄՆ դոլարի՝ մինչև 2050 թ-ը (Khemka et al., 2023; Voegele et al., 2024): Ամենամեծ պակասորդները կենտրոնացած են Սահարայի ենթասահարյան Աֆրիկայում և Հարավային Ասիայում, որտեղ անվտանգ կառավարվող ջրամատակարարման և սանիտարական պայմանների հասանելիությունը մնում է ամենացածրը (UNICEF/WHO, 2023):

Ավանդական ֆինանսավորման աղբյուրների ամրապնդումը և կոմունալ ծառայությունների արդյունավետության բարելավումը զգալի ներուժ են ստեղծում ոլորտի աճող կարիքները բավարարելու համար:

Սակագները, հարկերը և փոխանցումները մնում են ջրամատակարարման ծառայությունների հիմնական ֆինանսավորման աղբյուրները, սակայն ընդհանուր առմամբ անբավարար են ներդրումային կարիքները բավարարելու համար: Ջրամատակարարման ընկերությունները կրում են անարդյունավետության հետ կապված ֆինանսական կորուստներ, որոնք գնահատվում են ընդհանուր շահագործման ծախսերի մոտ 15%-ի չափով: Պետական բյուջեների կրճատումները կարող են մեծացնել ջրամատակարարման հետ կապված չվճարվող աշխատանքը, որը անհամաչափորեն կրում են կանայք (Joseph et al., 2024):

Ջրային ռեսուրսներում ներդրումները հանգեցնում են բարձր տնտեսական եկամտաբերության:

2014թ-ին կատարված գլոբալ գնահատումը ցույց է տվել, որ ջրային ոլորտում ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը բերում է մոտավորապես 4.3 ԱՄՆ դոլարի շահույթ՝ նվազեցնելով առողջապահական ծախսերն ու աղտոտվածության մակարդակը և ավելացնելով դպրոցների հաճախելիությունը (WHO/UN-Water, 2014):

Ջրամատակարարման պաշտոնական զարգացման օժանդակությունը (ODA) նվազել է, բայց նվիրատվության պրակտիկան ավելի ու ավելի է պահանջում հաշվի առնել գենդերային նպատակները և զեկուցել դրանց մասին:

Ջրամատակարարման և ջրահեռացման համար նախատեսված ODA պարտավորությունները 2022-2023թթ. ժամանակահատվածում նվազել են 9%-ով: Այնուամենայնիվ, ODA-ի ջրամատակարարման և ջրահեռացման այն մասնաբաժինը, որը նշված է որպես գենդերային հավասարության նշանակալի նպատակ ունեցող, կայուն աճել է՝ 2023 թվականին հասնելով 35%-ի (WHO/UNICEF, 2025b):

Մասնավոր ֆինանսավորումը սահմանափակ, բայց աճող դեր է խաղում ջրային ոլորտի ներդրումների համար:

Ի պատասխան բյուջետային ճնշումների և ODA-ի կրճատումների, ուշադրությունը տեղափոխվեց մասնավոր կապիտալի մոբիլիզացում: 2017թ-ին ջրամատակարարման և կոյուղու ենթակառուցվածքներում ներդրումների 9%-ը ֆինանսավորվել է պետական-մասնավոր գործընկերության միջոցով (Joseph et al., 2024): Փոքրածավալ համակարգերի համար, ինչպիսիք են ոռոգման և կոմունալ կեղտաջրերի մաքրումը, միկրոֆինանսավորումը և մանրածախ բանկային գործունեությունը բնորոշվել են որպես համապատասխան ֆինանսավորման ուղիներ (Khemka et al., 2023):

Ջրամատակարարման ֆինանսավորման համակարգերում գենդերային գործոնները հաշվի առնելու ավելի ու ավելի շատ հնարավորություններ կան, ինչը մեծացնում է ներդրումների արդարությունն ու արդյունավետությունը:

Ջրի ազգային ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2015թ-ին միայն 16%-ն է ուղղակիորեն մատնանշում կանանց՝ որպես կլիմայի հարմարվողականության գործընթացի հիմնական շահագրգիռ կողմեր կամ հիմնական դերակատարներ (Fletcher and Schonewille, 2015): Նույնիսկ համեմատաբար ցածր ֆինանսավորման բացեր ունեցող տարածաշրջաններում, ինչպիսին է Լատինական Ամերիկան, WASH-ի գենդերային բեռը մնում է բարձր, ինչը ցույց է տալիս անհամապատասխանություն ներդրումների մակարդակի և գենդերային նպատակներին ուղղված արդյունքների միջև (UNICEF/ԱՀԿ, 2023; Joseph et al., 2024):

Ավելի ու ավելի է գիտակցվում, որ կառավարման ձախողումները նվազեցնում են ջրային ռեսուրսների ֆինանսավորման արդյունավետությունը:

Կոռուպցիան և միջոցների ոչ նպատակային օգտագործումը սահմանափակում են WASH-ում ներդրումների արդյունավետությունը: Փաստերը վկայում են, որ որոշ դեպքերում Wash-ի նպատակային միջոցները վատնվել են կամ ուղղվել են ոչ նպատակային, ինչը հանգեցրել է ծառայությունների շարունակական դեֆիցիտի (Ohwo, 2019): Այս ձախողումները տնային տնտեսությունների մակարդակում հաճախ ավելացնում են չվճարված փոխհատուցման բեռը:

Մասնակցային և գենդերային գործոնները հաշվի առնող ֆինանսավորումը ցույց է տալիս կատարողականի շոշափելի աճ:

2024թ-ին գենդերային նկատառումներով ներդրումային ռազմավարություն կիրառող ներդրողների 90%-ը հայտնել են, որ հասել կամ գերազանցել են ֆինանսական սպասումները, ընդ որում 51%-ը հայտնել է նաև զգալի արդյունքների մասին (Hand et al., 2024):

Գենդերին ուղղված միկրովարկավորումը լայն տարածում է գտել ջրային ծառայությունների հասանելիության ոլորտում:

